



## ՍՈՒՐԲ ԱԹԱՆԱՍ ՀԱՅՐԱՊԵՏ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑԻ<sup>\*</sup> (295—373)

### Ժամանակաշրջանը

1974 թվականի հունիսի 20—25 օրերին Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի հոյն օրթոդոքս եկեղեցու պատրիարքության հայաձեռնությամբ և գիտավորությամբ Ալեքսանդրիայի հոնաց Էվլանգելիանու Մայր տաճարում, ո. պատրարքի մատուցմամբ և ապա գիտական-աստվածաբանական լուրջ բանախտություններով ո. հոբելյանական այլ հանդիսավորություններով, եշտում է ընդհանրական եկեղեցու բազմավաստակ, եռամեծ մարդապետի և մեծահամրավ հայրապետի՝ սուրբ Աթանասի համբան 1600-ամյակը:

Հանդիսավոր մասնակցում են հոյն օրթոդոքս պատրիարքական ինքնագլուխ Աթուների, որու պրավլուսավ եկեղեցու, ինչպես նաև քոյր եկեղեցիների, այդ թվում հայ եկեղեցու Աթելակացուցիչները:

Ս. Աթանաս ապրել և ստեղծագործել է Դ. դարում, եկեղեցու պատմության մեջ կրոնական, մշակութային, հասարակական ու քաղաքական մեծ վերափոխումներով և ի-

րադարձություններով հարուստ մի ժամանակաշրջանում, ժամանակաշրջան, որն իր անշնչելի նետքերու է թողել և՛ Ե դարի, և՛ նետագա դարերի քրիստոնեական մտածողության ու աստվածաբանական մտքի զարգացման վրա՝ որպես վերին աստիճանի մի բեղմնակոր և հոյն նետաքրրիք շրջան:

«Եկեղեցական աստվածաբանական գիտությունը չի ունեցել ոչ մի շրջան, որը մտքի ընդարձակությամբ և վեճությամբ, բույնդակության խորությամբ, գաղափարական հարատությամբ և տեսությունների բազմազանությամբ, աստվածաբանական ստեղծագործության բազմազանությամբ կարողանար հավաարվել այն բանին, ինչ որ նա IV—V դարերում անցկացրեց»<sup>1</sup>:

Բ—Ե դարերում անտիկ մշակույթի շրջանակներում հրապարակ իջավ եկեղեցու Վարդապետների և եկեղեցական մեծ հայրերի մի փառակոր համատեղություն, որի ստեղծած բազմածանր ու մեծարծեր եկեղեցական գրականությունը ծանոթ է Հայրաբանություն անվան ներքո:

Հայրաբանությունն ընդհանուր եկեղեցա-

\* Սուրբ Աթանաս Հայրապետի ապրած ժամանակաշրջանի, հոյա կանքի և գործունեության ու մատինագրական վաստակին նվիրված սովոր շարադրելիս հանգանանորեն օգտագործվել են թեմայի վերաբերյալ համերեն և օտար լեզուներով գրրված բազմազան աղյուրներ ու ուսումնասիրություններ:

<sup>1</sup> Պրոֆ. Ն. Սագարյա, Հոյն-Արևելքի հին եկեղեցական աստվածաբանական գիտությունը, յոր ծաղկման շրջանում (IV—V դդ.), ուսութեանցից բարձանեց Արտակ Վարդապետ Սմբատյան, Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռ և Հշմածնի, 1910, էջ 74:

կան մատենագրության հիմքով և կարևորագույն ժամանակ է: Հայրաբանների ստեղծագործություններն ունեն քրիստոնեական և համամարդկային հնչեղություն: Հայրաբանական այդ գրականությունը «սոոգորված էր մի նոր շնչով, վերանորոգիչ, երիտասարդական ավլունով և լուսով, որը մինչև այսօր էլ փոթորկահույզ ալիքներով ներթափացնում է ընթերցողի հոգու մեջ, հաճախ մարգարեական շեշտերով: Հայրաբանների խորհմաստ ու գեղեցիկ հումանիզմը հիմնվում էր Քրիստոսի մարդասիրության վրա, մի նոր աշխարհայաց, մի փիլիսոփայություն, որը նեղափոխեց հին աշխարհը սիրո և զոհաբերության ճանապարհով: Քրիստոսը հայրաբանների համար գերագույն բանականություն էր, որն այրվում էր սիրո մեջ և սիրոց» (Պրոֆ. Խ. Կոման, Առաջին չորս դարերի հայրաբանական գրականության արժեքը անտիկ մշակույթի շրջանակներում, «Էջմիածին», 1971, նոյեմբեր, էջ 8—15):

**Ընդհանուր եկեղեցու պատմության մեջ Դ—Ե դարերը հանդիսանում են ճշմարտապես աստվածաբանական մտքի զարգացման ժամանակաշրջաններ:**

Այդ դարերին հաջորդող եկեղեցու ասունականության բոլոր սերունդները կանգնում են Դ—Ե դարերի ստեղծագործությունների առաջ հարգանքով լի զարմանքով և այդ հարուստ հոգևոր գանձարանից են վերցնում ճշմարիտ, ուղղափառ հավատքի ու քրիստոնեական տիպար կյանքի համար սկզբունքներ և խրատներ:

Դ դարում հունա-հոումնեական կայսրության մեջ քրիստոնեության արտաքին դրույթան մեջ ստեղծված բարենպաստ պայմանները և հիմնական վերափոխումները լիակատար հանարավորություն տվեցին եկեղեցուն ոգեկան և մտավոր բոլոր իր ուժերը կենտրոնացնելու եկեղեցական կյանքի ներքին հարցերի լուծման և կարգավորման վրա:

**Դ—Ե դարերում ընդհանուր եկեղեցու պատմության հիմնական հարցերը քրիստոնեական դավանության հարցերն էին կազմում, որոնցով խորապես հնտաքրքրվում էին նաև ժամանակակից քաղաքակրթության բոլոր կենտրոններն ու անտիկ հասարակության բոլոր ներկայացուցիչները, մինչև իսկ խոնարհ դասակարգի մարդիկ: «Ամեն բան շարժման մեջ էր, ամեն տեղ վիճում էին, ամենքը հուզված էին»: Եվ դժվար չէ հաստատել, որ աստվածաբանական մտքի զանազան ուղղությունների և փիլիսոփայական դպրոցների կոիվ էր դա:**

<sup>2</sup> Պրոֆ. Խ. Սագարյա, Առաջնորդ, էջ 6:

Ընդհանուրական եկեղեցին չորս դար դիմացվ իր գոյության համար մղած պայքարում: Հայածանքները, դատավորությունները, այլ կրոնների պայքարը չկարողացան շատել եկեղեցու հոգնոր ու մշտանորոգ կյանքը: Եկեղեցին սկսեց ապրել, կազմակերպվել ու զորանալ իր ներքին կյանքով՝ որպես աստվածահաստատ մի ընկերություն, մի ընտանիք:

Մեծն Կոստանդիանոս կայսեր (306—337) հաղթանակը Միլիվանի (Խոտահա) ճակատամարտում և 313-ին Միլանի հրովարտակը եկեղեցու պատմության մեջ հանդիսացան շրջադարձային նշանակություն ունեցող իրադարձություններ: Վերջ տրվեց ներանու Հոռոմի կայսրությանը և բացվեց քրիստոնեական կայսրության դարաշրջանը: Կայսրության մեջ քրիստոնեությունը 313 թվականին մյուս կրոնների կողքին հոչակվեց քույլատրված և ապա հայրնատրրված պետական կրոն<sup>3</sup>:

Այսպիսով եկեղեցին մտավ իր քարոզական, մատենագրական առաքելության և գործունեության նոր ու խոստումնալից, արդյունավոր մի շրջան, զարգացրեց իր աստվածաբանական-գիտական մտածողությունը, իր ծեսն ու իր արվեստը, կազմակերպեց իր Ավիրապետությունը:

Ազատվելով արտաքին հաղածանքներից, եկեղեցին նվիրվեց քրիստոնեական հավատքի և ուղղափառ դավանության ու վարդապետական բանաձևների ճշգրտմանը:

Այս ուղղությամբ Դ—Ե դարերը հանդիսացան եկեղեցու հայրերի և վարդապետների մատենագրական հականառական առծունեության ժամանակաշրջան, եկեղեցական մատենագրության և արվեստի ուկեղար:

Սակայն, միաժամանակ պարզ դարձավ, որ թեև վերջ էին գտել եկեղեցու ներքին խաղաղությունն ու հանգիստ կյանքը վրդուվող արտաքին հաղածանքները, նո՞ր էր սկզբում այդ դարերում իսկապես նշանավոր և էական մեծ մարտերի, հականառությունների շրջանը: Այս իսկ պատճեռով Դ—Ե դարերի ընթացքում ընդհանուր եկեղեցու պատմության այս նոր շրջանը բնութագրվում է որպես աստվածաբանական-քրիստոնեական մտածողության, հականառությունների և մեծ վեճերի շրջան:

Այս շրջանի Արևելքում եկեղեցու մեծ ու ուղղափառ հայրերի և վարդապետների աստվածաբանական երկերը ուղեցուց են հանդիսանում քրիստոնեական հաջորդ սերունդների համար: Մինչև այսօր էլ եկեղե-

<sup>3</sup> Johannes Quasten, Patrology, vol. III, Utrecht (Antwerp), 1966, էջ 1—5.

ցական-աստվածաբանական միտքը, արվեստը ապրում են եկեղեցու այդ եռամեծ վարդապետների երկերի գաղափարական բոլորակությամբ և նրանց տիրական ողղոթյան մեջ:

Այդ ժամանակաշրջանում է, որ առաջանա և լուծվեցին աստվածաբանության և քրիստոսաբնության բոլոր հիմնական ու էական տարրերը, որոնք մինչև այսօր էլ պատմական և գործական համակարգությունն ունեն եկեղեցու կյանքի ու առաքելության համար: Նիկիայի (325), Կ. Պոլսի (381) և Եփեսուի (431) առաջին երեք Տիեզերական ժողովներում վճռվեցին ս. Երրորդության, Մարդեղության և Փրկագործության մասին հավատալիքներն ու հավատ համագունակները արիոսականության, հոգեմարտ մակեդոնականության, սաքելականության, հետորականության և այլ հերետիկոսությունների դեմ ողղափառ եկեղեցու մղած պայքարում:

«Քրիստոնեական կրոնքին դականաբանական հիմնական ճշմարտությունները, Երրորդության և Աստուծո Բանին սուրբ կրոյ Մարդաբնան Մարդեղության վերաբերյալ, սահմանված են Արևելքի մեջ գումարված Տիեզերական ժողովներեւ: Խոկ այդ հավատը պահպանելու համար, անոնք կրած են ու կրոն տակավին ծանր նեղություններ»<sup>4</sup>:

Դ—Ե դարերում Արևելքում ասպարեզ իշխան եկեղեցական մեծ հայրե ու աստվածաբաններ, ինչպիսիք էին Ակերասներ Ակերասներացին, ս. Արանապը, կապարովկան եկեղեցու երեք մեծ հայրապետներ՝ ս. Բարսեղը, ս. Գրիգոր Նազիազանցին (Աքանելագործ), ս. Գրիգոր Նյուացին, Հովհաննես Ուկերերանը (Անտիոքի եկեղեցի), ս. Կյուրեղ Ակերասներացին և ուրիշներ: Եկեղեցու այս մեծ հայրապետների մատենագրական վատակում «քրիստոնեական մի հումանիզմ ծնվեց, որի մեջ եկեղեցական գրականությունը իր կատարելությանը հնասավ»:

Այս շրջանում երբ եկեղեցին կայսրության մեջ հանդիսացավ գերակշռող մի ուժ, սուս մեծ հայրապետների ղեկավարության ներք և նրանց վաճական կանոնագրություններով, հատկապես Եգիպտոսում, Թթարայիսի մենաստաններում, կազմվեց տիպար, օրինակելի վաճականություն, որը ստեղծեց իր գրականությունը, մեծ ու հշանավոր վաճականների կյանքին ու գործունեությանը նվիրված, հանուն հոգևորականության կատարելության: Վաճականությունը վճռական

դեր կատարեց Եգիպտոսում, աստվածաբանական-քրիստոսաբանական հակածառությունների ժամանակ՝ ի պաշտպանություն ողղափառության:

Այս ժամանակաշրջանում հիմնվում են նաև հշանավոր աստվածաբանական դրագություններ, իրենց յուրահասություն ավանդություններով և ողղություններով: Դրանք հանդիսանում են քրիստոնեական մտածողության, ս. Գրոց մեկնաբանության, մշակույթի ու արվեստի օջախներ, հատկապես ներեսիկությունների դեմ մղված գաղափարական պայքարում:

Դ դարի դարդությունների մեջ աչքի էր ընկերություն Ակերասներիայի քրիստոնեական-աստվածաբանական դպրոցը, որ իր մասնագիտական կրթությունն ստացավ Արանաը: Ակերասներիան միաժամանակ դարձավ վտանգավոր բոլոր հերետիկությունների: Այստեղ ապրում էր և գործում նաև Արիոսը:

#### Ակերասներիայի քրիստոնեական-աստվածաբանական դպրոց

Ակերասներիան հիմնադրել է Մեծ Ակերասները, մ. թ. ա. 331 թվականին: Ակերասներիան եղիստական, նեղենիստական և հրեական մշակույթների համայնքան:

Արևելքն ու Արևմտություն միացնող այս քաղաքքը միաժամանակ հիմ աշխարհի մշակույթի, գիտության և կրթության կենտրոն էր: Քաղաքը հշանավոր էր նաև պրտեստական, ճարտարապետական իր գեղեցիկ հուշարձաններով, հարուստ իր մատենադարաններով, կուպաչուական իր տաճարներով, փիլիսոփայական իր դպրոցներով: Այստեղ տիրող փիլիսոփայական ուղղությունը նոր պատոնականությունն էր:

Ակերասներիայում կատարվեց նաև Հին Կուակարանի Յոթանատմիջ կոչված հումանիզմ տարգմանությունը, Պտղումու թագավորի օրոր, մ. թ. ա. Գ դարու (285—247):

Ակերասներիայում էր ապրում և ատեղագործում Ս. դարու նաև հրեա մեծ քարքի ու փիլիսոփա Փիլոն Եբրայեցին, որի մեկնադրական գրքերը եղանակ մեր թարգմանիշ վարդապետները վերածեցին հայերենի:

Ահա այս քաղաքում էր, որ քրիստոնեությունը երբ Ս. դարու մոտք գործեց, ս. Սարկոս Ավետարանչի քարոզչությամբ, մեծ շափով քան Արևելքի մի այլ քաղաքում, եկեղեցին սերտ շիման մեջ մտավ հելլենիզմի, նոր պղասոնական փիլիսոփայության, եգիպտական և հրեական գաղափարապետությունների հետ:

Ակերասներիայում Գ դարու ստեղծվեց

<sup>4</sup> Վակերաբուժքեր Վատիկանամ Բ Տիեզերական ժողովի, Վենետիկ, ս. Ղազար, 1967, էջ 155:

5 Quasten, Եույնը, էջ 1:

բրիտոնեական-աստվածաբանական առաջին դպրոցը, որը հետագույն կենտրոնը համախացավ «սրբազն գիտության բրիտոնեական սյատմության մեջ»<sup>6</sup>:

Ակերանդրիպում սկսվեց ճակա բուժական պայքարը քրիստոնեության և հեղենիզմի միջև:

Այս պալքարի դրական կողմն այն էր, որ հունական անտիկ մշակույթի իմացական ուժն օգնեց, որ քրիստոնեությունը դառնա ոգեկան հզոր ու վերանորոգիչ մի ազդակ կրոնական, փիլիսոփայական, ընկերային և նոյնինկ քաղաքական ու տնտեսական գաղափարախոսության թևագավառում:

Հունական մշակույթով սեած ու զարգացած մարդիկ գոհացում էին գտնում քրիստոնեական ուսմունքի մեջ և ընդունում էին այդ նոր կրոնը որպես իրենց իմացական և հոգեկան հետաքրքրություններն ու որումները բավարարող մեծագույն ճշմարտություն, որպես ճշմարիտ ոգեկանություն, բարձր բարոյականություն, որպես մի նոր ավելի մարդկային կրոնական մի ըմբռնում, որը կոչված է Վերանորոգելոյ, Վերափոխելոյ մարդկային սիրտն ու միտքը<sup>7</sup>:

Քրիստոնեությունն այսպիսով ողջ կայսրության մեջ համարվում էր մարդկության համար մի նոր կյանքի սկիզբը, իսկ Քրիստոսը՝ «կյանքի հաց», հոգիների և ձգտումների առաջնարար շրի ալբանուրը: «Ես եմ Շահապարհ, Շմարտորին և Կեանը» (Հովհ. ԺԴ 6), աշխարհը Քրիստով և Ավետարանով վերանորոգելու կրոնական, ոգեկան ու բարոյական մի անխորտակելի և կենսունակ ոժ:

Քրիստոնեության պատմության առաջին դարերում անսիկ աշխարհի հասարակությունն ապրում էր հոգեկան անստոգության ու որոնությունների մեջ, ընկերային իրքուր շերտավորություն, ու ծարավն ուներ ճշմարիտ հավատքի:

Իսկ այդ հշմարտությունը, այդ հավատքը գոյնվում էր միայն եկեղեցու մեջ, և միայն եկեղեցու կարելի էր հասկանալ հավատքը՝ ու հշմարտությունը:

Ալեքսանդրիայի աստվածաբանական դպրոցն իր առաջին ճաղկման բուն շըրջանուն ապրեց Գ դպրում: Այս դպրոցի առաջին և մեծ ղեկավարները հանդիսացան Կիեստի Ալեքսանդրացին (150—215) ու նրա տասնանդավոր աշակերտ Որոգինեար (180—253), որոնք եղան հետազոտություններական մտածողության մեծագույն ներկայացուցիչները:

Որոգինեսն առաջինը էր քրիստոնյա

Մտածողների մեջ, որ քրիստոնեական-աստվածաբանական գիտության հայր դապի և սահմանեց եկեղեցական գիտական աստվածաբանական հիմնական սկզբունքներն ու դասական գիտությունը և փիլիս-փայությունը «եկեղեցականացնելու առաջին քայլը առավ»: ...Այդպիսով «Որոզի՛Աւին հաջողվեց հաշտեցնել գիտությունը քրիստոնեական հավատքի հետ, բարձր քաղաքակրթությունը՝ Ավետարանի հետ եկեղեցական վարդապետության հոդի վրա»<sup>8</sup>:

Սալիւն, Ավերսանդրիայի դպրոցի մեծ  
ուսուցիչները կանգնել էին հիմնականում  
Աստվածաշնչի այլարանական մեկնության  
և եկեղեցու պահպանական հավատքի պաշտ-  
պանության դիրքերում:

Որդինեւսն այս ուղղությամբ իր մեկնողական և աստվածաբանական մեծարժեքություննեւրում, իր ստացած դասական փիլիսոփայական ընդունակությամբ կրթության պատճառով, հավատարիմ և «ավանդապահ չմնաց» եկեղեցու հին ավանդությանը, հավատքի ու «ընդհանուր եկեղեցական գիտությանը»: Որդինեւսի աստվածաբանական մեկնողական ուսուուրքի վրա հիմնավում էին միմյանց բոլորովին հակառակ դավանաբանական հայցքների տեր մարդիկ: Որդինեւսը աստվածաբանական-դավանաբանական այդ սայթաբումների համար «այնքան հակառակ անձնավորություն դարձավ» և զրկվեց եկեղեցու սուրբ ու մեծ հայր լինելու լուսապակից, թեև նրա ազդեցությունը շատ մեծ և տիրական էր և Աղեքսանդրիայի, և Անտիոքի, և Սուրբիքի, և Կապանովիկիայի աստվածաբանական դպրոցների վրա: Որդինեւսի հավատարիմ և մեծանուն աշակերտն էր և Գրիգոր Հացիանանին:

Աշխարհում էր և՝ դրվուի օսկրապանցը։  
Սլեքսանիդիայի դպրոցն ի հր ծաղկման  
փայլուն երկրորդ շրջանն ապրեց և. Աթա-  
նայի օրով (328—373)։ Ս. Աթանասը վրձ-  
նական ներ խաղաց Դ դարում քրիստոնեա-  
կան մուծողության մեջ՝ լնորդեմ արիոսա-  
կանության մղած իր պայքարում, հանու-  
հավատքի ուղղափառության։ Այս պայքա-  
րում «Աթանասը առաջնակարգ ոիքը Էր-  
գրավում Սլեքսանիդիայի եպիսկոպոսների  
մեջ»<sup>10</sup>։

Սուրբ Աթանաս Հայրապետի կյանքը և  
եկեղեցական գործունեությունը .

Մեր ձեռագիր Ծաղկանի Անդրի հիշատական անձում, պատմական և վարքագրական աղբյուրներում, ինչպես նաև օտար

<sup>6</sup> Quasten, II siwunn, § 21:

<sup>7</sup> Quasten, III 514000; Es 4, 6:

<sup>8</sup> Պոլֆ. Ա. Ախատրաշ. Յունի. Էջ 17, 18:

Նույնը. էջ 22:

<sup>10</sup> Quasten, III 512npp. 129 20:

եկեղեցական գրականության մեջ կան մեծ Հայրապետի կյանքին ու գործունեությանը նվիրված ընդարձակ և հետաքրքիր տեղեկություններն<sup>11</sup>:

Ս. Արանասի կյանքի և գործունեության մասին հայերեն առաջին ու հնագույն երկու ձեռագրական և ապա տպագիր աղբյուրներն են<sup>12</sup>.

1. **Վարք և քաղաքավարութիւն** (ճգնութիւն) սրբոյն մեծի Արանասի Ալեքսանդրացոյն եպիսկոպոսի և

2. **Ի պատմութեան վարուց Տիմոթէի և Արանասի, զոր ասացեալ է Տիմոթէի աշակերտի նորին և արոռուակցի Ալեքսանդրացոյն:**

Ս. Արանասը ծնվել է 295 թվականին Ալեքսանդրիա քաղաքում, որ և «սնեալ, ունեալ և աշակերտեալ ի գնաց առաքինաւէր կրօնից, ըստ միայնական վարուց մեծին և սրբոյն Անտոնի, որ և զնորայն իսկ շարադրեաց զվարս»:

Ալեքսանդրիայի քրիստոնարանական աստվածաբարնական դպրոցում նաև ստանում է իր եկեղեցական մասնագիտական կրթությունը. «Հոգովոն յառաջադիմանայր և սնանէր խրառու և իմաստութեամբ Տեառն, վարժեալ զորց սրբոց և հոգեպատում տանից մարգարեց»:

Ս. Արանասի ծնողները են եղել հայվատացյալ ու քրիստուք Մարկեղոնը և Սալոմոնն, որոնք ապրում էին «օրինօքն Աստուծոյ յԱստուած» և փոքր տարիքից նրան նվիրել էին «ի պաշտօն Աստուծոյ, որպէս Աննա զԱսմուէ», ինչպես նշված է Հին Կոռակարանում (Ս. Թագ. Ա. 26):

315 թվականին Արանասը սարկավագ է ձեռնադրվում Ալեքսանդրիայի Աթոռի հայրապետ Ալեքսանդր Ալեքսանդրացոյն, լինում է նրա քարտուղարը և իր այդ հանգամանքով էլ մասնակցում 325-ին Նիկիայի առաջին Տիեզերական ժողովին, որ «Ճնշ իսկ ախոյեան ընդիմ Մարիոսի շարափառութեան և ամբարտութեան... և յաղաց զիտորթեան և սուրբ վարուցն այնաւ փայլեաց որպէս արեգակն ի մէջ մեծի Սինհիորսին և մեծարեցան և փառատրեցան յամենեցունց»:

328-ին Արանասն արդեն որպես եպիսկոպոս հաշորդում է Ալեքսանդր Ալեքսանդրացուն Ալեքսանդրիայի պատրիարքական Աթոռի վրա, Կոստանդիանոս կայսեր հա-

վանությամբ. «կացուցանել զնա յԱթոռ սուրբ Ալետարանչին Մարկոսի»:

Նեշոն ու խաղաղ չի անցնում, սակայն, ս. Արանասի հայրապետությունն Ալեքսանդրիայում, Մարկոս Ալետարանչի պատրիարքական Աթոռի վրա:

Նիկիայի ժողովում թեև դատապարտվել և նզովիել էր արիոսականությունը, բայց այն դեռ շատ ուժեղ, աղջեցիկ էր և Ալեքսանդրիայում, որ զործել և քարոզել էր Արիոսը (256—336), միբացի այդ նեոր, և թե՛ ամբողջ կայսրության մեջ:

Արիոսը պաշտպանվում էր արքունիքի կողմից: Արքունիքը ընկեր էր արիոսականների ազդեցության տակ: Կայսրը եկեղեցու ծոցում պատականում վերացնելու բարեմը ընտությամբ, Նիկիայի ժողովից հետո Արանասի թելապրում էր Արիոսին վերընդունելու ուղղափառ եկեղեցու գիրկը և նրան հասկացնել Ալեքսանդրիայի եկեղեցիներից մեկը:

Արանասը մերժում էր կայսեր վտանգավոր և անհամեմ առաջարկը: Արվում էր հակամարտությունը Արանասի և արիոսականների միջև, մինչև իսկ Ալեքսանդրիայում: Այնունական, «արիոսական վեճի պատմությունն Արանասի կյանքի պատմությունն է դառնում»<sup>13</sup>:

Արանասը զրկվում էր իր Արիոսից և արսույնիս հակամարտությունների զրպարտությունների և չարախոսությունների պատճառով: Արիոսականների Արանասին համարում էին իրենց ամենափառազարդը և ամենաշու հակառակորդն ու նրան կործանելու համար դիմում էին ամեն սուր միջոցի: Եթե նրանց հաջողվեր տապալել Արանասին, ապա «Նովա ամենայն ուղղափառաց յաղթել վարկանէէին»: Արիոսականները նրան ամբաստանում էին սարկալիանության, կայսեր ու կայսրության դեմ հակառակության մեջ, թե նա պառակտում է եկեղեցու միությունը, խանգարում ներքին անորոշությունը ու խոռվում խաղաղությունը պետության մեջ:

Արանասն Ալեքսանդրիայի պատրիարքական Աթոռի վրա մնաց 45 տարի, 328—373-ը, մինչև իր մահը, որը տեղի ունեցավ 373 թվականի մայիսին:

Այս փոթորկալից ժամանակաշրջանում նա հիմա անգամ աթոռազրկվեց և 17 տարի անցկացրեց աքսորավայրերում:

<sup>11</sup> Հ. Ս. Անապան, Հայկական մատենագիտություն, Ե—ԺԸ դդ., Խոր. Ա., Երևան, 1959, էջ 321—322:

<sup>12</sup> Ս. Արանաս Ալեքսանդրիոյ Հայրապետի ճառը, բույզը և ընդիմասացութիւնը, Վենետիկ, 1899, էջ 1—23 և 24—26:

<sup>13</sup> Երվանդ Գարդապետ Տեր-Միհանյանց, ընդհանուր եկեղեցական պատմություն, Մայր Աթոռ և Էջմիածն, 1908, էջ 257:

Տես նաև Quasten, III հատոր, էջ 66. IV դարում «ուղղափառության պաշտպանության պատմությունը Արանասի կյանքի պատմությունն է»:

Բոլոր այս հալածանքներն ու բռնությունները, սակայն, չկարողացան ընկերել սուրբ Աթանասի մեծ ու արի հոգին, մարել երա անսպառ եռանդը, «Նա ոչ ողբանաց լսէր և ոչ սպանալեացն զարդուրէր»։ Աքսորավայրերից նա իր թղթերով ու գրվածքներով շարունակում էր պայքարը արիստականների, հոգեւախտ և աստվածամարտ Մալեդիմ Կ. Պոլսի պատրիարքի չարափառ ժետուրդների դեմ։

Ս. Աթանասն իր ողջ կյանքում անկուրում վճռականությամբ և կրուտությամբ «զստուեր եկեղեցու հալածեաց և բազում քաջութիւնն եցոյց» բոլոր տեսակի հերետիկոսական մոլորությունների դեմ։ «Խրատէր և ուսուցանէր զվարու վարդապետութեան և հաստատէր զամենեւեան ի հաւատը...։ Ամենայն հալածանաց և վշտաց համբերեանց, բազում նեղութիւնն կրեաց վասն եկեղեցեացն Աստուծոյ և անշարժ և անդրդուելի մնայր ի վերայ հիման աւանդութեան և առաքելոց և մարգարէից»։

Այս իսկ պատճառով նա կոչվեց «Հայությափառութեան» և «Սիմեոն Եկեղեցոյ», ինչպես նրան բնութագրել է ս. Գրիգոր Նազիազանցին։ Աթանասի նկարագրի հիմնական գծերն են եղել՝ աննահանջ քաջությունը, վտանգները դիմագրավելու անվեհերությունն ու հաստատամուռությունը, և պայքարում սկզբունքայնություն<sup>14</sup>։

Եթե ս. Աթանասը գոյություն չունենար, քրիստոնեությունն արիստականների մոլորության հետևանքով կդադարէր կրոն լիւելուց, իսկ եկեղեցին ու հավատացլամերը, ինչպես նշում են նրա վարքագիրները, «իրու Սոդու լիւէին և Գոմորայ հնամեին»։ «Եթե արիստականությունը հունական աշխարհում հաղթող հանդիսանար, նա ամենայն հավանականությամբ ամբողջ քրիստոնեությունը կոչեացներ, այսինքն տիեզերաբանությունն և բարոյականությունն կդարձներ այն, և կրոնը կկորչեր ըստ էության», նշում է գերմանացի մեծ գիտնական Սոդու Հառնակը<sup>15</sup>։

Ս. Աթանաս Հայրապետի կյանքի և գործունեության հիմնական աղբյուրները հանդիսանում են նրա գրվածքները՝ ճառերը, լոթերը, մեկնությունները։

## Ս. Աթանաս Հայրապետի մատենագրական վաստակը

Ս. Աթանաս Հայրապետը թողել է հարուստ և բազմածնոր մատենագրական վաստակ։ «Եթող բազում ճառու շարադրեաւ-

լու՝ յաղագս ուղղափառ հաւատոյ և սուրբ վարուց և մեկնութիւն սաղմուսաց և այլոց գրոց, զի յամենայնի մածախորհուրդը էր այրն Աստուծոյ, և բանի կատարեալ և հոգուվ լցեալ»։

Ս. Աթանասն իր մատենագրական վաստակով առաջնակարգ ու տիրական դեմք է հանդիսանում Դ դարի եկեղեցական հայրերի շարքում։

Զարմանալի է, որ ս. Աթանասն իր այնքան փոխորկու կյանքի և եկեղեցական պաշտոնավարության, այնքան վերիվայրումների, հալածանքների և հակառակությունների մեջ ժամանակ է գտնում զբաղվելու նաև գրական աշխատանքներով, որոնք առանձնահատուկ և կարնոր տեղ են գրավում քրիստոնեական մշակույթի ուկյա գանձարակում։

Ս. Աթանասի մատենագրական վաստակը սերտորեն առնչվում է Նիկողական Հանգանակի պաշտպանության և հերետիկուների դեմ պայքարի հետ։

Ս. Աթանասն իր գրականության մեջ հանդես է բերում Աստվածաշնչի բազմակողմանի հմտություն, խորամուխ իմացություն, վիճելու կոր տրամաբանություն, հանճարեղություն, համոզմունքների անկեղծություն ու հետևողականություն, տեղունի՝ կարծրություն, հատկանիշներ, որոնց մասին հետագա քրիստոնեական սերունդները հիացմունքով և երախտագիտությամբ են խոսում։

Ս. Աթանասն իր գրական վաստակի մեջ տեղծում է եկեղեցական մատենագրության նոր ձևեր և արտահայտչական միջոցներ։

Հայ բովանդակության և ժամերի ս. Աթանասի գրական հարուստ ժառանգությունն ընդունվել է բաժանել հետևյալ մասերի։

1. Զատագովական - դավանաբանական գործեր, 10 աշխատություն։ Այս գործերի մեջ նշում է ս. Աթանասի «Յաղագս մարմնաւրութեան Որդույն և սրբոյ Նրորդութեան» նարը։

2. Պատմա-վիճաբանական գործեր, 4 աշխատություն։ Սույն աշխատության մեջ կարեւորագոյնն է. «Ընդդիմասացութիւնք սրբոյ Աթանասի եպիսկոպոսի Աղեքանդրացու ուղղափառի և Արիոսի հերձուածողի, Յաղագս աստուծութեան Որդույ» (հարց ու պատասխանների ձևով)։

3. Մեկնողական գործեր, 7 աշխատություն, Մեկնութիւն Սահմուսաց, Ծննդոց, Երգեգոց, Յորայ, Մատթէոսի, Ղոկասի, Կաթողիկեայ թղթոց և այլն։

4. Վարքագրական գործեր, 4 աշխատություն, որի մեջ պատմական ու եկեղեցական մեծ արժեք է ներկայացնում «Վարքերանելույն Անտոնի» (250—356) եգիպտաց-

<sup>14</sup> Quasten, III հատոր, էջ 20։

<sup>15</sup> Երվանդ վարդապետ Տեր-Միհանյանց, նույնը, էջ 258։

ոյ միայնակեցի և մաս նորին սուրբ ծերություն և աստուածափրի, թուղթ Աթանասիո: Սովոր վարքագությունը ու Աթանասի ընդարձակագույն գրական աշխատափրաբարյունն է: Աթանասը եղել է մեծ վաճականի աշակերտ և նրա վարքը գրել է 357-ին, ու Անտոնի մահից (356) մեկ տարի հետո, Թերայիտի վաճականների խնդրանքով: Աթանաս Հայրապետի սովոր «Վարքագործություն» ընդհանոր եկեղեցու պատմության մեջ կոչվել է «Վաճական կրաքրի մի կանոնադրություն, պատմածքի ձևով տրված»<sup>16</sup>:

Ս. Աթանասի գրեած ու Անտոնի «Վարք»-ը մեծ ազդեցություն է գործել արևոտքի վաճականության կազմակերպման բնագավառում: Այս գործը թարգմանվել է լատիներենի: Օգոստինոսը վկայում է իր «Խոստովանութիւն» աշխատության մեջ, որ ս. Աթանասի «Վարք»-ը վճական ազդեցություն է գործել ինչպես իր ամենայն, այնպես էլ որից զարգացած հերթանուների դարձի վրա:

Ս. Աթանասը գրել է նաև բազում  
5. Ճաւեր, ներքողյաններ, խրատներ:  
6. Թղթեր:

Ինչպես հայտնի է, ս. Աթանաս ունեցել է լայն թղթակիցություններ ժամանակի եկեղեցական ու քաղաքական մեծ դեմքերի հետ:

Ս. Աթանասի թղթերը ոչ այնքան անձնական թերություն են կրում, որքան ընդհանոր եկեղեցական, աստվածաբանական-քրիստոնաբանական, ջատագովական ու վիճաբանական և շատ կարևոր են որպես փաստաթուղթ՝ ժամանակաշրջանի պատմության համար:

Ս. Աթանասի մատենագրական փաստակի մեջ են մտնում նաև.

7. Կանոններ<sup>17</sup>,  
8. Պատորագամանություն<sup>18</sup>:

Ս. Աթանասի հոմարենի և լատիներեն մատենագրական լրիվ փաստակի մասին տեսնել Quasten patrology, III հատոր, էջ 23—66:

Սովոր հորվածի նպատակից դուրս է հանգամանորեն խուզել Մեծն Աթանաս Հայրապետի աստվածաբանական-քրիստոնաբանական ուսմունքի առանձնահատկության և կարևորության մասին:

16. Ս. Գրիգոր Նազիազանցի:

17. Ներսես վր. Մելիք-Թանջան, Հայոց եկեղեցական իրավունքը, գիրք Ս. Շոշի, 1903, էջ 249—250: Ապօքեն Հակոբյան, Կանոնագիր հայոց, Ս. Երևան, 1964, էջ 282—328, 603—612 (Ծանրություն):

18. Հ. Հ. Գաբրիելյան, Արքական պատարագամանություն հայոց, Վիեննա, 1897, էջ 217—318:

Այս ուղղությամբ գիտական լորջ և ամբողջական ուսմունափրայքուն է հրատարակել Ըստիք հնուս մասնագետ Quasten-ը, III հատոր, էջ 66—79:

Ասկայս անհրաժեշտ ենք համարում համառուսակի խուզել Արիոսի մոլորության և ս. Աթանասի ողղափառ դավանության մասին:

Ինչո՞ւ էր կապահով Արիոսի մոլորությունը: Արիոսը, ինչպես հայտնի է, ժամանել էր Բամբն-Քրիստոսի աստվածությունը և դրանով իսկ վտանգով Մարդկության ու Փրկագործության խորհուրդը: Նու ստում էր «Միայն Աստված մը կա, ոչ ծիսալ, հավիտենական»: Այդ Աստվածը միշտ Հայր չէ եղած. կար ժամանակ մը, երբ Հայր չէր Անիկա: Ան ծանալ որդի մը իր ազգության մեջ է, որդին արարուծ է, որդին ծնան ծնան է ժամանակի մեջ և Հորը մեջ ստեղծագործությունն է. հաւաքար ու համագոր չէ Հորը. մասնակից չէ Անոր ո՛չ էպորանը և ո՛չ ալ հավիտենականությանը, որով հետ ծնան ծնան ըլլարու բնույթուն ունի:

Որդին ընությամբ կատարեալավես աննըման է Հորը և Անոր ընութենեն տարրեր գոյացությունն մը ունի և իբր արարուծ՝ փոփոխություններու ընդունակ ընությունն մը ունի. կար ժամանակ մը, որ Որդին չկար: Որդին «կրտսեր է բան զՀայր», Հայրը անընդունի է Որդիին, վասնզի Որդին «արարուծ է և անգետ ասորն կատարածի»:

Ինչպես կտեսնիք, հակասություններու հրավածք մըն է ամբողջ Արիոսի վարդապետությունը, ասպարություն փոքր մը՝ հաշտեցնելու կրոնական շաները արամասացորդան պահանջներու հետ» (Թորգոն պատրիարք Գոշակյան, Հերձաւածողներ, անոնիպ, Երևանիկ, «Արիոս», էջ 1—6):

Մեր եկեղեցին ընդհանրական եկեղեցու հետ դատապարտում է պաշտոնական Արիոսի մոլորությունը, և պատարագի ընթացրում, «Հաստամք»-ից հետո արտասևներ հետևալ բանաձևը.

«Եսկ ոքք ասենն, Եր երբեմն յորժամ ոչ էր Որդին, և կամ Եր երբեմն յորժամ ոչ էր ս. Հոգին, կամ թէ ոչկից եղեն, կամ բայց մէ եղթենէ, ամեն լինել զմորդին Աստոմոյ և կամ զուրքը Հոգին, և թէ փոփոխելիք են կամ աղավելիք, զայնախիսն նզումէ կաթուղիկէ և առաքելական ս. եկեղեցի» («Քրիստոնեական», Անդիլիսա, 1971, էջ 21):

Արիոսի այս մոլորությանը հակադրեց ս. Աթանաս իր աստվածաբանական քրիստոնաբանական ողղափառ դավանության ուսմունքը, որը հիմնարար համախացավ Նիկական Հանգամակին:

Աստվածաբանական - քրիստոնաբան-

իան իր ուսմունքի մեջ և Աթանասի «մեծագոյն արժանիքը ու ծառայությունը մը նում է պահ, որ նա պաշտպանեց առաքելական, ավանդական քրիստոնեությունը հեղենացման վտանգի դեմ, վտանգ, որը թարձնված ձևով հանդես էր գալիս Սրբութ և նրա հետնորդների հերետիկության մեջ» (Quasten, III հատոր, էջ 66): Ս. Աթանասի իր ուսմունքի մեջ գործածում է հունական մտածողության ձևերն ու գաղափարները, եկեղեցու ուղղափառ հավատքը հաստակացնելու համար, բայց դրանց հաղորդում է քրիստոնեական Հայունության միջոցով ստացված բովանդակությունն ու խորք: Նա հաստակորեն գիտի տարրերել հունական մտածողությունն ու քրիստոնեական Հայունությունն այնուեղան, որ վտանգ կարող էր լինել Ավետարանի ճշմարտության մթագնմանը և կամ սխալ հասկացմանը:

Ս. Աթանասը պաշտպանում է ոչ միայն Որդու համագոյակցությունը Հոր Աստծու հետ, այլ նաև ձեռնիհասորեն է բացատրում Ծննդին ու Բնությունը Բանին-Քրիստոսին, քանի մի այլ աստվածաբան այդ ժամանակաշրջանում:

Ս. Աթանասի ճառերի, թղթերի նպատակն է եղել՝ ապացուցել ընդհանրական եկեղեցու «հինագոյն ավանդությունը, ուսուցում և հավատքը, ինչ որ Տերը ավանդեց իր եկեղեցուն, ինչ որ առաքյալները քարոզեցին և հայրերը պահեցին»:

Ս. Աթանաս իր հակառակորդների ուղինախտական-բանապաշտական մտածողության դեմ հակադրում էր հավատքի գերակայությունը, կամ առաջնությունը: Հաստ նրան բանականությունը միայն չի կարող դատավոր լինել բնագանցական հարցերի մեջ: Հավատքը է հարկավոր: Բանականությամբ մարդը չի կարող խորանալ ո՛չ իր և ո՛չ էլ երկրավոր իրերի բնության մեջ, ո՛չ էլ խոսել աստվածային, անճառելի բնության մասին:

Ս. Աթանասի աստվածաբանական-քրիստոսաբանական ուսմունքը թիմնաքարտը է հանդիսանում եկեղեցու ս. Երրորդության և քրիստոսաբանական վարդապետության, ինչպես բանաձևած է Նիկիական Հանգանակում:

Ս. Աթանաս Սրբութ դեմ հակամառում է, որ Որդին արարած չէ, այլ Ծնունդ, հանագոր Աստծոն հետ, լրիվ աստվածությամբ. «Աստուած յԱստուծոյ, Լոյս ի Լուսոյ, Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ, նոյն ինքն ի բնութենէ Հօր, Ծնունդ և ոչ արարած»:

Որդին հավիտենական է, ինչպես Հայրը: Հայրը և Որդին երկու առանձին անձեր են,

բայց աստվածային նոյն բնությունն ունեն, որով Աստուծոն հանդեպ Որդու ստորակալության հարց չի կարող լինել:

Ս. Աթանասի մոտ Բանին Մարմառության և կամ Մարդեղության վարդապետությունը Փրկագործության վարդապետություն է: Միաժամանակ:

Ս. Աթանասին է պատկանում թևակոր, բայց շատ գեղեցիկ ու խորիմաստ այս բանակը. «Աստված մարդացավ, որպեսզի մարդն աստվածանա»: Քրիստոս իրեն ունացնացրեց, որ մենք անմահությունը ժառանգենք:

Առանց Քրիստոսի Մարդեղության և Մարմառ, չկա փրկություն մարդու համար. Քրիստոս հաղթեց մահվան, ոչ միայն իրեն, այլ նաև ողջ մարդկության համար. «Վասն մերոյ փրկութեան իշեալ ի յերկնից, մարմառացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի սրբոյ կուսէն, հոգուվն սրբով, որով էառ զմարմին, զիոդի և զմիսու և զամեայն ինչ որ է ի մարդն ճշմարտապէս և ոչ կարծեօք» (Ժամագիրը, Բեյրութ, 1968, էջ 113):

#### Ս. Աթանաս Հայրապետի գործերի հայերեն թարգմանությունները

Մեր եկեղեցական-թարգմանական գրականության մեջ մեծ թիվ են կազմում ս. Աթանասի գործերից և ուղղակի հունարեն թարգմանությունները, որոնց մի քանիսի «սկզբնագրերը դեռ չեն հայտնաբերված հունական գրականության մեջ»<sup>19</sup>:

Անհրաժեշտ է շեշտել այն հանգամանքը, որ Եղարի մեր թարգմանական գրականությունն այնքան ընդարձակ է եղել, և կատարվել է այնպիսի ընտրությամբ, որ ընդհանուր եկեղեցական մատենագրության շատ կարևոր երկեր, այդ թվում նաև ս. Աթանասի գործերից մի քանիսը, մնացել են միայն հին հայերեն թարգմանությամբ, և այսօր գիտության համար մատչելի են հայերեն այդ թարգմանությունների հրատարակությամբ:

Ս. Աթանասի աշխատություններն են թարգմանվել են Եղարի մեր թարգմանիչ կարդապետների կողմից:

Բայց դժվար է հստակորեն որոշել, թե «յորո՞մ ժամանակի և յումմ» փոխեալ իցեն ի հայ լեզու» այդ թարգմանությունները<sup>20</sup>:

Մատենագրական և մանավանդ ձեռագիր Ժառընտիրների վկայությամբ մեր թարգ-

<sup>19</sup> Հ. Ս. Աթանաս, նոյնը, էջ 328:

<sup>20</sup> Ս. Աթանասի Սղեսանդրացոյ Հայրապետի ճառը, նոյնը, «Ձեկուցումն», էջ 6:

28

մանիշ վարդապետները և դարում հայերենի են վերածել ս. Աթանասի Բետկայ գործերը.

1. Ի Հոգին-արքը, 2. Ըստիկմ Արիան-սաց, 3. Ի սուրբ Երրորդութիւնն և մարմաս-տրութիւն Բանին, 4. Առ Եսիկատեմն եախս-կապս Կորնեացոց, 5. Առ Փեղագեղոս ե-ափսկապս, 6. Առ Լիքերիս Հոռվամայ, 7. Յաղագ սրբոյ Երրորդութեան, 8. Ըստիկմ ամենայն հերքուածոլաց, 9. Յաղագ Հոգ-ույնի սրբոյ համերդաց, 10. Ըստիկմասդրո-թիւն ընէ Արիոսի, յաղագ աստուածու-թեան Որդուն, 11. Դարձեալ առ նոյն Յա-ղագ սրբոյ Հոգուն, 12. Ըստիկմ Զաքուսի Հրէի՝ յաղագ աստուածութեան Որդոյ, 13. Յաղագ խորհրդածութեանց մկրտելոց, 14. Յաղագ կուսութեան, 15. Ի շարչարան և ի յարութիւն Տեառն, 16. Առօթք<sup>2</sup>:

Այնուհետև, Ը դպրում Ստեփանոս Սյունիցին (680—735) հավերենի է թարգմանել և Սթանափ Բետկապ հինգ ճառերը. 1. Յաղագ մարմնաւորութեան Աստուծոյ Բահն, 2. Առ Յովիթակոյ թագաւոր՝ Յաղագ հաւատոյ, 3. Ընդդէմ Պաղոսի Սամոսաց-ից՝ թէ մի է Աստուծ, 4. Յաղագ թէ Անձն իմ խոռվեալ է. 5. Յաղագ յայտնութեան Տեսոն:

Ստեփանոս Այունեցին և Աթանասի տոպի  
հինգ ճաները հունարենից հայկենի է  
թարգմանել և Հովհան Օձնեցու (650—720)  
հրամանով. «կատարեցաւ հրամայեալս ի  
քէն, ո՞վ վեհ, երիցս երանեալ բարունա-  
պես, անուանակից և շնորհընկալ մեծի  
Ամբողջութեա»<sup>22</sup>:

Օտագրական հիշատակարաններում և Սյանսափի գործերը բնութագրվում են որպես «հրաշապատում և լուսազարդ վարդապետութիւն աստուածազեաց առնեն, գլուխ և հիմն ամենայն ուղղափառաց, որ ել համբաւ հաւատո՞յ նորա ընդ բնաւ ամենայն»:

Ս. Աքանասի գործերի հայերեն թարգմանության 1899-ի հրատարակության մեջ ստեղծվել են հրա հետևյալ ճառերը, թղթերը, մեկնությունները.

1. Յաղագն մարմնատրութեան Որդուն  
և սրբոց Երրորդութեանն (Եշ 27:56):
  2. Ծառ վասն հաւատոյ թէ մի է Քրիստոս,  
ընդդէմ Պատղոսի Սամոսացոյ (Եշ 56:63).
  3. Յոթ՝ թէ այժմ անձն իմ խոռվեալ է (Եշ 64:67).

<sup>21</sup> Մատենադարան, Հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 278—288:

<sup>22</sup> Մատենադարան, նոյն տեղ, էջ 287—288, և  
Կորպաք Խոխկովսոն Պողարքան, Հայ գրողներ,  
Երևանիմ, 1971, էջ 113:

4. Յաղագս փրկարան Յայտնութեան  
Տառն մարդ Յիսոսի Քրիստոսի, ընդդեմ  
Խաղաղոցի (Եջ 68—88),

5. Թուղթ առ Արագիրն եպիսկոպոս, Յա-  
ղաք Հոգովու սրբոյ (Էջ 88—116):

6. Թուղթ առ Լիբանան սպասում  
Հովհաննա (էջ 117—118),  
7. Աստված առողջ Եղիսաբետան (էջ

- 119-123), Առաջնահարությունը կամ առաջնահարությունը

8. Թուղթ առ Փիլադելֆիան և պատվագու, (էջ 124—133),

9. Հնդիկականացրություն պրեմա օքանական-  
և աշխալքառսի Աղեքանարացւոց ուղղափառի  
և Արքակի հերձանածողի Յաղագ աստվա-  
ծորեան Որբու (էջ 134—182):

10. Նոցուից խնդիր դարձեալ, վասա Տա-  
ղագու սրբոյ Հոգուու (էջ 182—190),

11. Օրբելյան օքտոտապ ապրագութակը տիմ Աղեքանդրու և Զաքէի առն Հրէի Հարցուն և պատասխանիք և սուր և առք վիճակուն (էջ 191—234),

12. Տասներեքամյակ առ Օքրիու, զի ա-  
սէր երէ կրսէր (կրտսէր) է Որդի քան  
զշայր, արարած և տգէտ առորհ կատարա-  
ծի (էջ 235—238),

- \*13. Երանելով Աքանասի ասացեալ Յամեասաւրը Երրորդութիւնն (էջ 239—242),  
14. Առաջ Ականասի Անկերաստորոնի է-

14. Սրբուն Սրբաւասի Յալբասամբ և պիսկոպոսի ի Հոգին Աստուծոյ (էջ 243—257),

- \*15. Սրբուն Աթանասի Աղեքանդրու Հայուպետին, ի Ծնունդի Քրիստոսի (էջ 258—263),

- 17 Անամասի ասաւած Արտապողութեան  
տին Աղեկասնդրու, ասացաւ ի վերացումն  
Տևան մերոյ Յիսոսի Քրիստոսի (Ա.շ 263—  
280),

17. Օքանակը ապացակ օքտավոլորդը,  
(բացատրութիւն), առարելական (Առարե-  
լական հաւատամբ, փարդապեսովթիւն),  
Յաղագ Աստուածայնուն մարմնաւոր-  
թեան Աստուծոյ Բանին (Եջ 281—283),

- \*18. Երանելույն Ալթանասի Սղիքանդրի եախսկոպոսի խօսք ի սուրբ Աստուածածին և յողոյն Եղիսաբեթի (Լ.ջ 284—291),

- \*19. Սբրոյն Արթանասի Աղեքսանդրի Հայրապետի ճերրողեան ի սուրբ Աստուածածին ասացեալ և ի միշտ կոյսն Մարիամ (էջ 292—311),

- \*20. Սրբուն Աթանասի եպիսկոպոսի Ա-  
ղեքանդրու աաացեալ ներռոյեան ի սուրբ  
Խաչն աստուածքնեապ (էջ 312—323),

- #### 21. Թուղթ սրբոյ Աթանասի եպիսկոպոսի

\* Αυτη η ανθρώπινη ματινωστική φύση διατηρεί την αρχή της ανθρωπότητας μας. Η φυσική ματινωση στην αρχή της ζωής μας είναι η πρώτη φύση μας, η φύση της φύσης μας.

Սղերասնդրացոյ առ Եպիկտետոն եպիսկոպոս Կորնթացոց, զոր ապահանեալ էր ի հերձուածողաց, յորմ գգուշացոյց զԱնտիռացիս սուրբ Կիրել (էջ 324—343),

22. Սրբոյն Աթանասի եպիսկոպոսապետի Աղեքսանդրացոյ առ Յովիթանու թագաւոր վասն հաւատոյ (էջ 344),

\*23. Թուոյթ Աթանասի եպիսկոպոսի առ Յուստինէ յԱփիրիկ (էջ 345—346),

24. Երանելոյն Աթանասի ասացեալ Հարցմունք վայելուշը և պատասխանից հոգեշահք (Մի շարք այլ Ծարընտիրմերում այս ճառը հետևյալ վերնագրով է. «Երանելոյն Աթանասի արքեպիսկոպոսի Աղեքսանդրացոյ, հարցմունք վայելուշը և պատասխանից Կիրոյի Երուսալմի Հայուայտին, յաղագ մակացութեան (գիտութեան) և հանճարոյ», էջ 347—477),

25. Դաւանութին ս. Աթանասի (Այլ օրինակոմ «Դաւանութին ուղղափառ հաւատոյ, ասացեալ մեծին Աթանասի գերազանց վարդապետի Աղեքսանդրու»), էջ 478—481),

26. Յաղագ Մելքիսեդեկի, ի գործ սրբուն Աթանասի (էջ 482—488),

27. Վասն սքանչելեաց պատկերին Քրիստոսի, պատկեր ի տախտակի գՔրիստոսի խաչելութիւնն, ի պատմութենէն սուրյն Աթանասի Աղեքսանդրացոյ (էջ 489—492),

\*28. Տեսիլ սրբոյն Աթանասի (էջ 493—499),

29. Սրբոյն Աթանասի Աղեքսանդրու Հայրապետի ներքողեան ի սուրբ Ստեփանոս յառաջապարհաւած և նախավկայն Քրիստոսի (էջ 500—515),

30. Վկայութին սրբուն Միհասի և Երմոգին և Գրակոսի (էջ 516—532):

31. Վարք Երանելոյն Անտոնի Եօհապտացոյ միայնակեցի և մահ նորին սուրբ Ճերունոյ և աստուածամիրի, թուոյթ Աթանասի (էջ 532—614),

32. Յառաջարան Դավթի (սաղմոսաց) մեկնութին առարեալ Աթանասի եպիսկոպոսապետի Աղեքսանդրացոյ (էջ 615—648):

Սույն հասորի մեջ չեն մտել.

33. Կանոնք Աթանասի գումար ութուն և եօթն (Կանոնագրքերուն Աթանասի կանոնների թիվը տատանվում է 87-ից մինչև 90-ուն)՝<sup>23</sup>

34. Պատարագամատոյց Աստուծով, զոր

<sup>23</sup> Մատենադարան, Հայկական թարգմանութեանց, էջ 285: Վահան Վրդ. Բաստամեանց, Յառաջարանութին Դատաստանագրոց Միմիթարայ Գոշի, էջ միամին, էջ 1—180: Ներևս վարդապետ Մելքիք-Թանգան, նոյնը, էջ 249—250: Հ. Ս. Անասան, նոյնը, էջ 859—880, Վազգեն Հակոբյան, նոյնը, էջ 282—328 և 603—612:

արարեալ է ի սրբոյ Հօրն մերոյ Աթանասի ու պատրիարքին Աղեքսանդրու<sup>24</sup>,

«Սույն Պատարագամատոյցի հունարեն թագիքիրը ծանոթ չէ»<sup>25</sup>:

35. Օրինակ բարեպաշտութեան, ճառ:

Մայր Աթոռի միաբան Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը խոսում է «Ա. Աթանասի անվան հետ կապված գործերի մի քանիսի վավերականության մասին, օգտվելով Էջմիածնի մատենադարանի անտիպահութեանց»<sup>26</sup>:

Սուրբ Աթանասին են վերագրվում նաև «անհարազուն և երկրորդական» այլ աշխատություններ, որոնց մասին այստեղ չի խոսվելու: Ա. Աթանասի թշնամիները և հատկապետ արիուսականները, ինչպես վկայում է ս. Կյուրեղ Աղեքսանդրացին Մելիտինե քաղաքի Ակակիոս հույն եպիսկոպոսին ուղղած իր նամակում, «ապականեալ են զգիր ս. Աթանասի»<sup>27</sup>:

Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանն իր Հառաջարանու գրում է, որ Աթանասի «հայերն ի թարգմանությամբ նորա անունը կրող գրվածքների մի մասն էլ անվավերական է»<sup>28</sup>:

«Կնիք հաւատոյ» ժողովածուում տպագրվել են նաև ս. Աթանասի տարբեր գործերից հետևյալ հատվածները և վկայությունները.

1. Երանելոյն Աթանասի Աղեքսանդրու եպիսկոպոսին՝ ի Բանէն որ յերգս երգուն.

Նորին՝ ի Բանէն, որ ի Զարչարան (էջ 247—248):

2. Երանելոյն Աթանասի, եպիսկոպոսի Աղեքսանդրու ի թոյեոյն, որ առ Եսթերուն և Ղուկիին և Աստերուն (էջ 264):

3. Երանելոյն Աթանասի, եպիսկոպոսի Աղեքսանդրու՝ ի Բանէն որ յաղագ խաչին.

Նորին՝ ի ծնունդս և ի չարչարան (էջ 304—306):

4. Երանելոյն Աթանասի, եպիսկոպոսի Աղեքսանդրու, որ ի Տօնականէն՝ ի յերեռորդ գլխոյն, որ առ Դեռևսեստիանու, ի յերրորդ Տամականէն. Նորին Գ. Դիրկիդուանին՝ ի Ժ. Տօնականէն, որ տառաս խաչին, որ արիանուացն (էջ 345—348):

Երևանի և Մեսրոպ Մատոնցի անվան ծեռառելի Մատենադարանում էլ պահվում են ս. Աթանաս Հայրապետի մատենա-

<sup>24</sup> Մատենադարան, Հայկական թարգմանութեանց Ամսնեաց, էջ 255: Հ. Հովսեփ Գաթըրճյան, Արքաց պատարագամատոյցը Բինգերորդ դարուն վերջերը, Վինենա, 1897, էջ 217—318:

<sup>25</sup> Հ. Ս. Անասան, նոյնը, էջ 357—358:

<sup>26</sup> Նոյնը, էջ 368:

<sup>27</sup> Կնիք հաւատոյ, էջ LXII:

<sup>28</sup> Նոյնը, էջ LXIII:

գրական վաստակն ամփոփող քազում ձեռագրեր<sup>29</sup>: Այդ ձեռագրերի մասին խոսելը նոյնպես կարող է մի այլ ուսումնասիրության հյութ բանիսանալ, որը դուք է մը նում սույն շարադրանքի նպատակից:

Մեր եկեղեցին տարին երկու անգամ տոնում է հիշատակը և Աթանաս Հայրապետի: Առաջինը՝ հունվար ամսակա մեջ Կյուրեղ Այնքանդրացի Հայրապետի տոնի նետ<sup>30</sup>, իսկ երկրորդը՝ հոկտեմբերի մեջ, «Սրբոց երկոտասան վարդապետաց» Թեթէոսի, Դիոնիսիոսի, Սեղբեատրոսի, Կիրեղ Երոսաղենացու, Եփրեմ Խորին Աստրու, Բար-

սեղ Կեսարացու, Գրիգոր Նիւացու, Գրիգոր Աստուածաբանի, Եսիիփան Կիսրացու, Յովհաննէս Ուկերերանի և Կիրեղ Աղեքսանդրացու» ընդհանրական եկեղեցու կողմից որպես անմերժելի հեղինակությունները լինունված այս մեծ հայրապետների և վարդապետների տոնի նետ<sup>31</sup>:

Ս. Աթանասը եղել և մնում է քրիստոնեական եկեղեցու մեծահանձար հայրապետներից մեկը, «որոյ մեծութեան ոգոյ և մտաց զհասասարեաց թերևս ոչ ոք ի հարց եկեղեցւոյ», իսկ երա գրական վաստակը հանդիսանում է քրիստոնեական մշակույթի արժեքավոր և մեծագոյն գանձը:

Ա. Հ.

<sup>29</sup> Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, 1965, հատոր Ա, էջ 1252, «Աթանաս», հատոր Բ, 1970, էջ 1444:

<sup>30</sup> Օրացուց, ս. Եշմիածին, 1977, էջ 23:

<sup>31</sup> Խոյեր, էջ 132:

